ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պետական մարմնի անվանումը՝ ***Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

Ամփոփաթերթի կազմման ամսաթիվը՝ 09.04.2024 թ.

#	Դիտողության/ առաջարկի բովանդակությունը	Առնչվող ոլորտը, ծրագիրը, միջոցառումը	Դիտողության/ առաջարկի հեղինակը	Դիտողության/ առաջարկի ներկայացման ամսաթիվը	Պետական մարմնի դիրքորոշումը/ արձագանքը դիտողության/ առաջարկի վերաբերյալ	Դիրքորոշման ներկայացման ամսաթիվը
1	2	3	4	5	6	7
1	***Լսողության խանգարում ունեցող անձանց համար տեսակապով զանգերի ծառայություն*** Ներկայացվում է առաջարկ, որը միտված է Լսողության խանգարում ունեցող անձան շահերի պաշտպանությանը և մատչելի ծառայությունների ապահովմանը: Առաջարկը, որը արվում է արդեն գործող ծրագիր է, իրականացվում է «Հայաստանի Խուլերի Միավորում» ՀԿ կողմից, որը նպատակային ենք համարում դարձնել պետական ֆինանսավորմամբ ծրագիր: Ծրագրի ստեղծման փուլում ընդգրկել ենք Հայաստանի բոլոր մարզերում և Երևանում բնակվող Լսողության	1160 Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում	«Հայաստանի Խուլերի Միավորում» ՀԿ	04.04.2024	Ընդունվել է: «Հայերեն ժեստերի լեզվով հաղորդակցվող անձանց հեռավար թարգմանության ծառայություն» միջոցառումը 2025 -2027 թթ ՄԺԾԾ հայտով ներկայացվել է որպես նոր նախաձեռնություն	10.04.2024

	խանգարում ունեցող անձանց, քննարկել ծառայության մատուցման մատչելի տարբերակը, այն է տեսակապով, զանգերի ծառայություն: Հեռավար տեսակապով զանգերի ծառայությունը հնարավորություն է տալիս ԼԽՈՒ անձանց ՀՀ բոլոր մարզերում ինչպես նաև Երևանում ապահովել կապը պետական և ոչ պետական մարմինների հետ տեսազանգի միջոցով: Սա հնարավորություն է ընձեռում մատչելի կերպով ապահովել ծառայությունը առանց հավելյալ տրանսպորտային ծախսերի կամ տեղաշարժման, քանի որ ժեստերի լեզվի թարգմանիչը խնդրին ծանոթանում և պատասխանում է հեռավար տեսակապի միջոցով: Ծառայությունն հասանելի կլինի բոլոր պետական և ոչ պետակա մարմիններում ԼԽՈՒ անձի դիմելու դեպքում: Բոլորը քաջատեղյակ են որ ՀՀ- ում այս պահին կա որակավորված ժեստերի լեզվի թարգմանիչների պակաս, ուստի այս ծառայության շրջանակում քիչ ռեսուրսներով՝ կարելի է հասնել մեծ արդյունքի: << Հայաստանի Խուլերի Միավորում >> ՀԿ իր տեխնիկական ռեսուրսների, ինչպես նաև լիցենզավորված թարգմանիչների միջոցով կարող է նպաստել ծառայության որակի բարձրացմանը: Քաջատեղյակ լինելով ԼԽՈՒ անձանց ծառայությունների մատուցման նրբություններից, տիրապետելով տվյալների մեծ բազայի, առաջարկում ենք					

	այս ծրագիրը ներառել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՄԺԾ 2025-2027 թթ. ծրագրում: Պահանջվում է 4,976,016 ՀՀ դրամ: Պետական բյուջեից բացի այլ այղբյուրներից ֆինանսավորում չի պահանջվում: Անհրաժեշտ տեխնիկական միջոցների և ինտերնետ կապի մշտական ապահովումը կազմակերպվում է << Հայաստանի Խուլերի Միավորում >> ՀԿ-ի կողմից, ծառայության հասանելի կլինի յուրաքանչյուր աշխատանքային օր 09:00-18:00:					